

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀ-  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱԶՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒ-  
ԹՅԱՆ ԲԵՐԲԸ ՀԱՎԱԲԵԼՈՒ, ԿԱԼՍԵԼՈՒ ՅԵՎ ՊԱ-  
ՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

628

Ժ-21

Հրատ. ՀԵՍՏ ԴՆԵՐԳՈՐԾՈՂԿ. ՀԵԳԵԽԱՇԵԶ ԲԱՇՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1936



25.04.2013

1010  
41671  
628 | 20526040401  
8-24 | 403088661

259 15/11/78

259 - 15/11/78

628  
821

# ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՏԿ-ՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՐՀ-  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՅՐԴԵԶՍՅՈՒՆ ՊԱՀՊԱՆՈՒ-  
ԹՅԱՆ—ԲԵՐԲԸ ՀԱՎԱԲԵԼՈՒ, ԿԱԼՍԵԼՈՒ ՅԵՎ ՊԱ-  
ՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ



Ներգործող. Հրգեհար Բաժնի

1986



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                         | Եջ |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|----|
| 1. Հակահրդեհային միջոցառումներ բերքը հա-<br>վաքելու և կախելու ժամանակ . . . . .                                         | 3  |
| 2. Հակահրդեհային միջոցառումներ տրակտո-<br>րակալոնների կանգնեցնելու և դաշտում<br>վառելանյութը պահելու տեղերում . . . . . | 9  |
| 3. Հակահրդեհային միջոցառումներ կալերում,<br>խրճանոցներում, չորանոցներում և հացահա-<br>տիկային պահեստներում . . . . .    | 11 |
| 4. Հրդեհաշեջ պահպանությունը քնակելի վա-<br>րերում՝ բերքահավաքի ժամանակաշրջանում . . . . .                               | 14 |
| 5. Հակահրդեհային միջոցառումներ անասնաբա-<br>կերում . . . . .                                                            | 16 |
| 6. Հրդեհաշեջ պահպանության պետի պարտա-<br>կանությունները . . . . .                                                       | 18 |
| 7. Հրդեհի ժամանակ կիրառվող միջոցները . . . . .                                                                          | 20 |

«Հաստատում եմ» ԽՍՀՄ Ներք-  
գործ ժողովրդական հրդեհաշեջ պահ-  
պանության Դլխ. Վարչ. պետ՝  
Խոյապեկոյ:

1935 թ. 23 ոգոստոսի

«Համ. Կ(բ)Կ Կենտկոմը կուսակ-  
ցական և խորհրդային բոլոր կազմա-  
կերպություններից, ՄՏԿ-ների ու  
խորհատեսուկությունների գերեկտոր-  
ներից և կոլտեսուկությունների վար  
չություններից պահանջում է բերքը  
հավաքելու և հրդեհներից խուս-  
տորեն պահպանել»:

(Համ. Կ(բ)Կ պլենումի 1935 թ.  
հուլիսի 7-ին ընդունած՝ «Դյուդա-  
տեսեսական միջոցների բերքահա-  
վաքի և միջոցառման մասին» բանաձև-  
վից) :

# 1. ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԲԵՐՔԸ ՀԱ- ՎԱՔԵԼՈՒ ՅԵՎ ԿԱԼՍԵԼՈՒ ԺԱՍՏԱՆԱԿ

1. Բերքը հավաքելու և կախելու ժամանակ  
տրակտորները, կոմբայները և ավտոմեքենաները  
գործի մեջ կարող են դրվել՝ նրանց մոտորի ալո-  
ման և կարբյուրացիայի սխտեմն ուղիուղով կանո-  
նադրելուց հետո, վորպեսզի նրանց խլացուցիչ մա-

Պատ. խմբագիր Ս. ՋԱՏԻՆՅԱՆ  
Բարգմ. և սրբ. Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆ  
Տեխ. ձևավ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

Գետհրատի տպարան, Օբերան. II Դեմի 4

Դրվագ 2017, Գրադի 2029, Տեխն 3000



սում տղայթյուններ չառաջանան և նրանցից ծուխ չբարձրանա:

Բերքը հալաքելու և կալսելու գործում չի թուլատրվում գործածել ալյուխի շարժիչ մեքենաներ, վորոնց վառելանյութի ամանները տարքին չեն և վորոնց խողովակներից վառելանյութ ու յուղ և հոսում կամ կաթում:

Բոլոր ելեկտրահաղորդիչները պետք է լավ ամրացվեն և մեկուսացվեն: Մոտորը պետք է պահել մաքուր վիճակում: Փուրքաքանչյուր հերթափոխության ժամանակ նրա վրայի կեղտն ու փոշին պետք է մաքրել յերկու անգամից վոչ պակաս, վորովհետև իրենց մեջ վառելանյութ և յուղ պարունակող փոշին ու կեղտը հանդիսանում են իբրև հեշտ բոցավառվող նյութ:

Մոտորների, տրակտորների, ավտոմեքենաների և կոմբայնների բացվող խողովակները, ինչպես և լոկոմոբիլների խողովակները պետք է ունենան կաշիահանգուցիչներ, իսկ այդպիսիք չլինելու դեպքում պետք է փոխարենը մետաղի ցանցից (վորի անցքերը 2 միլիմետրից ավելի չեն) դրվեն կաշիորս-թասակներ, ջրի կաշիորսիչներ և այլն:

2. Տրակտորների, ավտոմոբիլների և կոմբայնների մոտորներն աշխատելիս պետք է ծածկվեն կապտաներով կամ կարբյուրատորի ու բացվող խողովակների կողմից ունենան մետաղե ցանցեր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել «Փորձոն» տրակտորների վրա, վորոնք ունեն ցածրագիր մոտոր և վորոնց կարբյուրատորն ու բացվող

խողովակները գետեղված են աջ կողմից, այսինքն հասկերը կտրելու կողմից:

3. Ստացիոնար (անշարժ) աշխատող տրակտորների բացվող անցքերի մոտ պետք է փոսեր փորել և կաշիներ չառաջանալու համար լցնել ջրով կամ թե շրջապատել թաց հողով: Նույնպես նպատակահարմար է տրակտորները դնել փոքր խորոված հատարակ փոսերում: Կալերում տրակտորը կալսիչի հետ դրվում է ալյուխ, վոր բացվող խողովակը շարունակ դարձած լինի դեղի հակառակ կողմը:

4. Կոմբայնների մոտորների բացվող խողովակները պետք է լինեն սարքին վիճակում: Արգելվում է խլացուցիչի զարարիտի չափերը փոքրացնել:

5. Վորպեսզի հացահատիկները, հարդն ու ծղոտներն ավտոմեքենաների, տրակտորների բացվող խողովակների տաքանալուց չբոցավառվեն, նրանք պետք է պաշտպանված լինեն աղբեստի թերթերով և յերկաթալարով լավ ամրացված լինեն:

6. Վոչ պակաս քան 3 որը մեկ անգամ աշխատանքն սկսելուց առաջ բացվող խողովակների, կաշիահանգուցիչների և խլացուցիչների այրուքը (нагарь) պետք է պարբերաբար մաքրել (վորպեսզի մրի վառվող մասնիկներ դուրս չթռչնեն):

7. Արգելվում է բերքը հալաքելու և կալսելու աշխատանքների վայրում մեքենաների մեջ վառելանյութ լցնել: Նույնպես արգելվում է մոտորն աշխատելիս տրակտորների ու ավտոմոբիլների մեջ վառելանյութ լցնել: Մոտորները պետք է կարգավորել վառելանյութերի (ծղոտ, խոտ և այլն)



կուտակման տեղից 50 մետրից վոչ պակաս հեռավորութեան վրա:

8. Տրակտորները, (ավտոմեքենաները) և կոմբայնները նորոգելու և կարգավորելու գիշերային աշխատանքները չպետք է բաց լուսավորութեան տակ կատարել:

9. Ֆենդինը, կերասինը և այլ տեսակի դյուրախոհ հեղուկները վառելիս՝ հանձնարարվում են այգւպիտները հանդգնել միմիայն հողով, ավազով կամ փրփրացալու կրակմարիչներով:

10. Կալատեղերը պետք է պատրաստել բոլոր տեսակի շենքերից, պահեստաբաններից, փշատերև ծառերի անտառներից, խոտի պահեստներից, չհնձած հացահատիկների արտերից և այլն վոչ մոտիկ քան 150 մետր հեռավորութեան վրա: Ցանկալի յե կալատեղերը պատրաստել բնական կամ արհեստական քրաղբյուրներին (գետերին, լճերին, ջրհորներին) մոտիկ:

11. Հրդեհներ առաջանալիս կրակի առաջն առնելու համար՝ կալատեղերի, խոտի, հացահատիկների ու ծղոտի դեղերի, վառելանյութի տեղի, ավտոմեքենաների, տրակտորների, լոկոմոբիլների և կոմբայնների վանդակներու տեղերի շուրջը պետք է 5 մետր լայնութեամբ հողը դռնախնով վարել:

Յեթե այդ հնարավոր չէ, վառելու փոխարեն պետք է այդ տեղերի շուրջը յեղած ամբողջ խոտն ու բուսականութեանը վորքան կարելի յե մաքուր հնձել:

12. Կալսիչ մեքենան լոկոմոբիլով աշխատեցնելիս

անհրաժեշտ է վերջինս դնել ծղոտի դեղի այն կողմը, վորտեղից քամին փչում է վոչ դեպի դեղը:

13. Աշխատանքի պրոցեսում կուտակված ամբողջ ծղոտը և հարդը պետք յե կալատեղից վորքան կարելի յե արագ կերպով հավաքել վարած շերտից 100 մետրից վոչ պակաս հեռավորութեամբ մի անվտանգ տեղ:

14. Աշխատանքները վայրում կատեգորիկ կերպով արգելել՝ ծխել, կրակ անել, լուցիկ վառել, չարժիչ մեքենայի և մեխանիզմի նորոգման այնպիսի աշխատանքներ կատարել, վորոնք կապված են բաց կրակ անելու հետ, ինչպես և տրակտորների մեջ վառելանյութ լցնելու աշխատանքներ կատարել:

15. Կալատեղի շուրջը վարված շերտի սահմաններից դուրս ծխելու համար պետք է հատկացնել առանձին տեղեր, այնպիսի հրապարակներում, վորոնց հողի վերին շերտը (ամբողջ խոտն ու բուսական մասը) մաքրված լինի: Ծխելու տեղերում պետք է դրվեն ջրով լցված տակառներ կամ դուլքեր:

16. Բերքը հավաքելու և կալսելու աշխատանքների տեղերում, ինչպես և կալսիչ մեքենաների, կոմբայնների ու ավտոմեքենաների աշխատանքների տեղերում պետք է ունենալ լիակատար սարքին հրդեհաչիջ ինվենտար (փոցիս, յեղաններ, կացիններ), վոր հրդեհի դեպքում հնարավորութեան տա վառվող բոլոր նյութերը քաշել և հրդեհի տեղը ջրով հանդգնել (դուլ, ձեռքի նստոսներ և այլն):

17. Աշխատանքների վայրում, վորը հրդեհի տե-



տակետից վտանգավոր է, չպետք է թույլ տալ, վոր առանց հատուկ մարդկանց հսկողութեան փոքրահատակ յերեխաներ լինեն:

18. Դաշտում կրակ անելու անհրաժեշտութեան դեպքում (կերակուր յեփելու, ջուր տաքացնելու համար և այլն) խոհանոցի, դուբերի (куб), կասկարաների (таган) և խարույկներ անելու համար տեղ պետք է ընտրել աշխատանքի վայրից վոչ պակաս, քան 100 մետր հեռավորութեան վրա՝ այնտեղ, վորտեղից քամին փչում է դեպի հակառակ կողմը: Բացի դրանից այդ տեղերի բոլոր չոր մոլախոտները պետք է լավ մաքրել, իսկ ավելի լավ է դրանց շուրջը վարել:

19. Չպետք է թույլ տալ խոհանոցի շուրջը մեծ քանակութեամբ վառելիք դարսել:

20. Բերքահաւաքից հետո բերքի մնացորդներն ու մոլախոտները դաշտում վառել կարելի չէ միմիայն այն ժամանակ, յերբ հարեան տեղամասերի բերքահաւաքը վերջացած է և կարելի չէ միմիայն հրդեհաշեջ հսկողութեամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ.— Չի թույլատրւում անտառի մոտերքում և տորֆային շերտում յեղած բերքի մնացորդներն ու մոլախոտները դաշտում վառել:

21. Կալեկու տեղերում պետք է դրվի մոտավորապես հետեյալ հրդեհաշեջ ինվենտարը (մեկ կալսիչ մեքենա դրված լինելու դեպքում).

- Ձեռքի հրդեհաշեջ նասոս . . . . . 1
- 20 մետրանոց փռովի շլանգ . . . . . 2

- Նույնն ընդունիչ ցանցով . . . . . 1
- Փողակ . . . . . 1
- Անվակառքի վրա դրվող 300 լիտրանոց տակառներ . . . . . 2

- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ.— Հաջորդ յուրաքանչյուր կալսիչ մեքենային ավելացվում է մեկ տակառ:
- Ստանցիոնար (անշարժ) ամաններ (500 լիտրանոց . . . . . 1
- Դույլեր յուրաքանչյուր տակառի համար . . . 3
- Յերկաթե յեղաններ . . . . . 3
- Ճանկեր . . . . . 2
- Յերկաթե բաճեր . . . . . 3

- Չոր ավազ՝ արկղներով
- «Տրեմատ» կրակմարիչ . . . . . 1
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ.— Կրակմարիչներ չլինելու դեպքում ավելացվում է դույլերի քանակը:

## 2. ՀԱԿԱՀՐԳԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՏՐԱԿՏՈՐԱԿԱԼՈՆՆԵՐԻ ԿԱՆԳԱՌՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԴԱՇՏՈՒՄ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ ՊԱՇԵԼՈՒ ՏԵՂԵՐՈՒՄ

22. Տրակտորակալոնների ժամանակավոր կանգառները (դաշտում) պետք է պատրաստել ծղոտից և և չոր խոտից մաքրված հրապարակներում, վորոնց շուրջը պետք է 5 մետր լայնութեամբ հողը վարել:

23. Տրակտորները հրապարակներում պետք է չարել խումբ-խումբ, ունենալով յուրաքանչյուր խմբում 10-ական տրակտոր, վորոնք միմյանցից



պետք է հեռու լինեն 1 մետրով, իսկ տրակտորային խմբերը՝ 10 մետրով:

24. Տրակտորների վառելանյութերն ու յուղանյութերը պետք է դնել ծղոտից ու չոր խոտից մաքրված հրապարակներում, վորոնք բերքը հավաքելու և կախելու տեղերից, անտառներից, ծղոտի դեղերից և չհնձած հացահատիկներից, տրակտորների կանգառներից և այլն, 50 մետրից մոտիկ հեռավորության վրա չպետք է գտնվեն և պետք է ավելի ցածր տեղերում լինեն, քան վերջինները. պետք է հրապարակների շուրջը 5 մետր լայնությամբ հողը վարել:

25. Դաշտում գտնվող վառելանյութի տակառները պետք է լցված լինեն իրենց ծավալի 95 տոկոսով ու դրված լինեն խցանը դեպի վերև դարձրած. տակառները տաքանալուց պետք է պաշտպանել՝ նրանց ժամանակավոր թեթև ծածկի տակ պահելով կամ բրնձեղենափուլ, վահաններով ու այլ միջոցներով ծածկելով: Տակառների բերանները պետք է խցաններով ամուր ծածկել. արգելվում է մետաղե տակառների համար փայտե խցաններ դործածել:

26. Դատարկ տարան պետք է կուտակել վառելանյութի պահպանության տեղից 20 մետրից վոչ պակաս հեռավորության վրա:

27. Զի թույլատրվում տրակտորները և մեքենաները լցնելու համար վառելանյութը տեղափոխել բաց գույլերով: Վառելանյութը փոխադրելու համար պետք է կիրառել պինդ փակվող մետաղե ամաններ:

28. Տրակտորների կանգառներում և վառե-

լանյութի պահպանության տեղերում արգելվում է՝ ծխել, կրակ վառել, խաբույկներ անել ու կրակով ամեն տեսակի նորոգման աշխատանքներ կատարել և տրակտորների մեջ վառելանյութ լցնել:

29. Արգելվում է մոտորներն աշխատելու ժամանակ տրակտորների մեջ վառելանյութ լցնել, ծխել, վառելանյութ լցնելու ժամանակ կրակ անել:

30 Տրակտորակալոնների կանգառների տեղերում պետք է ունենալ հետևյալ հրդեհաչեղ խմբետարը.

|                                  |        |
|----------------------------------|--------|
| № 3 «Տրեմատ» կրակմարիչ . . . . . | 1—2    |
| Արկղներով չոր ավաղ . . . . .     | 1—2 խմ |
| Ցերկաթե բահեր . . . . .          | 2      |
| Դուլեր . . . . .                 | 2      |

### 3. ՀԱԿԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԿԱԼԵՐՈՒՄ, ԽՐՁԱՆՈՑՆԵՐՈՒՄ, ԶՈՐԱՆՈՑՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԻԿՆԵՐԻ ՊԱՇՏՍՆԵՐՈՒՄ

31. Հացահատիկի յուրաքանչյուր խրճանոց և չորանոց պետք է ունենա սարքին, բարդ պտույտներով պատրաստված վառարան, վորպեղի չորանոցի շենքի մեջ կայծեր չթուչեն:

32. Խրճանոցը (կալը, հացահատիկի չորանոցը) տաքացնելիս վառարան վառողը պետք է շարունակ աջնաեղ գտնվի:

33. Խրճանոցի (կալի, հացահատիկի չորանոցի) տաքացման շենքում և նրա մոտ պետք է ունենալ տակառների մեջ լցված ջրի պաշար և ջրի դուլեր:



34. Հացահատիկները պետք է պահել միմիայն առանձին, այդ նպատակի համար առաջուց նշանակված և հարմարեցված շենքերում:

35. Արդելվում է հացահատիկների պաշտպանություն համար ոգտագործել չերդակները:

36. Արդելվում է հացահատիկների հետ միասին այլ տեսակի, առանձնապես հրավտանդ նյութեր պահել:

37. Արդելվում է հացահատիկային պահեստներում բնակարան պատրաստել:

38. Հացահատիկային պահեստների արանքների տարածությունները պետք է պահել մաքուր վիճակում և այնտեղ իրեր չլցնել: Պահեստները պետք է պարբերաբար մաքրել:

39. Արդելվում է հացահատիկային պահեստների սահմաններում ծխել, կրակ անել և խարույկ վառել:

40. Արդելվում է հացահատիկային պահեստները տաքացնել:

41. Հացահատիկային պահեստների համար սահմանից անվտանգ է ելեկտրական լուսավորությունը, վորը պատրաստված է հրդեհի տեսակետից վտանգավոր շենքերի կանոնների համաձայն:

Մասնավորապես՝

ա) չի կարելի ելեկտրականություն անցկացնել շնորային ձևով, այլ պետք է անցկացնել անջատված ձևով՝ մեկուսիչներ ունեցող կեռերի վրայով:

բ) լամպերը պետք է ունենան հերմետիկ փամփուշտիկներ և ապակե թասակներ:

գ) անջատիչներն ու ապահովիչները պետք է դրվեն դռի կողմից:

42. Այն տեղերում, ուր ելեկտրական լուսավորություն գոյություն չունի, թույլ է տրվում հացահատիկային պահեստները լուսավորել սկումապատուրային լապտերներով և «Չղջիկ» կոչվող լապտերներով: Կատեգորիկ կերպով արգելվում է հացահատիկային պահեստներում ոգտվել նավթի լամպերով, մոմերով և այլն:

43. Չպետք է դեպի հացահատիկային պահեստ տանող դռները իրերով լցնել: Վորպեսզի դռների յետևը ներսի կողմից հացահատիկով չլցվի, պետք է ներսի կողմից դռների մոտ դնել տամբուլներ (հացահատիկներով լցված տոպրակներից կամ տախտակներից):

44. Հացահատիկային պահեստների միջով ազատ անցուղաբաժ անելու համար լցված հացահատիկի վերևից յուրաքանչյուր մուտքի դիմաց պատրաստվում են կամրջակներ: Հացահատիկները տարաների մեջ լցված ձևով պահելու դեպքում հացահատիկների շեղջերի արանքում դռների և դարպասների դիմաց պետք է պատրաստել 1 մետրից փոք սրական լայնություն անցքեր:

45. Հացահատիկային պահեստները բնական օդափոխիչների (պատուհանների, պատուհանների օդանցքների, դռան) միջոցով պետք է պարբերաբար ոգտվի:

46. Հացահատիկների ջերմաստիճանն ստուգելու համար յուրաքանչյուր պահեստում պետք է ունենալ ջերմաչափ: Յերբ հացահատիկի ջերմությունը հասնում է 35 °-ի, նրան թիակներով շուտ ու մուտ են տալիս:



47. Բոլոր հացահատիկային պահեստներն առաջին հերթին պետք է հրդեհի համար ապահովված լինեն ջրով:

#### 4. ՀՐԴԵՀԱՇԵՋ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԵԼԻ ՎԱՅՐԵՐՈՒՄ՝ ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻ ԺԱՍՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բնակելի վայրերում բերքահավաքի ժամանակաշրջանում պետք է՝

48. Հրդեհաշեջ սրահին կից կազմակերպել մշտական հերթապահություն: Կատեգորիկ կերպով արգելել այդ աշխատանքի մեջ ներգրավելու հիվանդներին ու ծերերին: Նույնպես սահմանել ձիերի հերթապահություն, վորոնք ընդունակ են հրդեհաշեջ ինվենտարն արագ կերպով հրդեհի վայրը փոխադրելու:

49. Բնակելի վայրերում իրենց անմիջական աշխատանքի բնույթով մնացած կոլտնտեսականների միջև բաշխել հրդեհի դեպքում նրանց ունենալիք պարտակա նությունները և նրանց յուրաքանչյուրին ամրացնել հրդեհաշեջ վորոշ ինվենտար: Նրանց հետ կատարել հրդեհի վայրը հավաքվելու և ինվենտարը գործադրելու վարժություններ:

50. Կոլտնտեսությունների և դաշտերի դիշերային պահակներին հրահանգներ տալ հրդեհի վերաբերյալ բնակչությանը լուր տալու կարգի մասին. բնակելի վայրերն ապահովել բավարար չափով ազդարարական գործիքներով (զանգ, վոռնիչ, սուլիչ):

51. Կարգի բերել բնակելի վայրերին մոտիկ յեղած ջրափոսերի (գետերի, լճերի և այլն) մատուցները. հրդեհի ժամանակ ոգտագործելիք ջրափոսերը մաքրել:

52. Յուրաքանչյուր բակի մոտ ունենալ ջրով լի քի

կիսատախառ կամ տակառ՝ խիով ծածկված, իսկ այն դեպքում, վորտեղ բացի կիսատախառներից բնական ջրափոսեր չկան, պետք է դնել անհրաժեշտ քանակությամբ ջրով լցված մեծ ամաններ:

53. Չպետք է փողոցներն ու անցարանները, փայտով, ճյուղերով, խոտով և ծղոտով լցնել: Չպետք է թույլ տալ, վոր անմիջապես սրահների, բակերի, պահեստների և այլ շենքերի դռների մոտ այդպիսի առարկաներ կուտակվեն:

54. Չի կարելի շենքերի մոտերքում տաք մոխիր, չլակ յեվ ածուխ թափել. պետք է ածուխը ջրով հանդցնել հրակայուն ամանում. վառարաններն ու ինքնաշենքերը վառելիս չի կարելի բեհղին, նավթ և այլ տեսակի դյուրափառ հեղուկներ գործածել:

55. Չի կարելի վառվող պրիմուսները, նավթի լամպն ու վառարանները թողնել առանց հսկողության: Այնտեղ, վորտեղ յերեխաներ կան, չպետք է խաղալիքներ անել:

56. Չի կարելի բաց կրակով մոռնել մատանները, գոմերը, սրահները, խոտանոցները և այլն:

57. Չի կարելի բակերում և փողոցներում խառույկներ անել:

58. Չերգակներում և սանդուխքների վրա յեղած բոլոր անպետք իրերը պետք է հեռացնել:

59. Չի կարելի լամպերի մեջ նավթ լցնել և նրանց պատրույգները կարգի բերել (կտրելով), առանց նրանց հանդցնելու և թողնելու, վոր սառչի:



## 5. ՀԱՎԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆԱՍՆԱԲԱԿԵՐՈՒՄ

60. Անասնաբակի յուրաքանչյուր առանձին շենքի համար պետք է կազմվի՝ հրդեհի դեպքում անասուններին բացահանելու (эвакуация) պլան, և ամբողջ ապարակող անձնակազմի միջև պետք է վորոշակի կերպով բաշխել բացահանման պարտականությունները: Անասունների բացահանման պլանն ու վերոհիշյալ պարտականությունների բաշխման ցուցակը պետք է կախել յուրաքանչյուր անասնաբակում աչքի ընկնող տեղերում:

61. Անասունների շենքերի դարպասներն ու դռները չպետք է պինդ փակել, կամ թե դանադան նյութերով, առարկաներով, աղբով և այլ բաներով լցնել:

Բոլոր դարպասներն ու դռները պետք է յեղբի ուղղությամբ հեշտությամբ բացվեն:

62. Արգելվում է դարպասների ու դռների մեջ շեմքեր և աստիճաններ պատրաստել, ինչպես և ինքնիքեն ծածկվող դռներ և նման բաներ շինել, վորոնք անասունների ալատ բացահանմանն արգելք են հանդիսանում:

63. Մտուշների տրանքների ճանապարհները պետք է լինեն միանգամայն ազատ: Արգելվում է այդ ճանապարհներում դանադան առարկաներ և իրեր լցնել, փորպաղի անցուղիքներ չխանգարվի:

64. Փտախների դռները չպետք է կաղպեղով փակել, այլ կարելի չէ փակել միմիայն հեշտ բացվող աղանակներով:

65. Յուրաքանչյուր փարախի կամ մուրի մոտ

պետք է դրվեն հարկ յեղած քանակով պախուցներ (недоуздок), ամեծեր և անասուններին դուրս հանելու հարմարանքներ:

66. Խիտ կերպով արգելվում է անասունների շենքերում մեկ անգամ կերակրելու նորմայից ավելի կերի պաշար պահել: Չի թույլատրվում անասունների շենքերի վրա խոտի դեղեր և այլ տեսակի կերեր դարսել:

67. Անասնաբակերի շենքերի և նրանց առջևի հրատարակների ծղոտը, աղբն ու կեղտը պետք է պարբերաբար մաքրել և մշտապես մաքուր պահել:

68. Անասունների շենքերում թույլ է տրվում վառարաններ դնել միմիայն բացառիկ դեպքերում (հորթանոցներում և այլն) և միմիայն հրդեհաչեղ պահպանության մարմինների թույլտվությամբ:

69. Վառարանները պետք է վառեն հատուկ նշանակված մարդիկ, նրանց մշտական հսկողությամբ և միմիայն այն ժամերին, վոր հատուկ ժամացուցակով նախատեսված է:

70. Անասունների շենքերում լուսավորության պարաղաները պետք է դնել այնպես, վոր անասունները չկարողանան նրանց վնասել կամ ցած գցել:

71. Նրկատրական լամպերը պետք է դրվեն մետաղե ցանցերի կամ հերմետիկ արմատուրայի մեջ:

72. Նրկատրական լուսավորություն չլինելու դեպքում թույլ է տրվում դործածել ակիումուլյատոր ունեցող լապտերներ կամ «Չղիկ» լամպեր:

73. Արգելվում է լապտերները դնել բարյերների, միջնորմների, կերամանների, դետնի վրա և այլն, վորտեղ նրանք կարող են չորս փայլ:



74. Արգելվում է անասունների շենքերում լապտերների մեջ վառելանյութ լցնել և նրանց մեջ հեշտ բոցալառվող հեղուկներ պահել:

75. Արգելվում է անասունների շենքերում ծխել և բաց կրակով ոգտվել:

76. Անասունների բոլոր շենքերը պետք է ապահովել հրդեհը հանգցելու համար ջրով լցված տակառներով, վորոնք պետք է ունենան 200 լիտր տարողությոն և ունենան դույլեր. տակառները պետք է ամուր դրվեն շենքերի դրսում, իսկ ձմեռը ներսում՝ մեկը մյուսից վոչ ավելի քան 30 մետր հեռավորության վրա:

Արգելվում է տնտեսական կարիքների համար տակառների ջրից ոգտվել:

## 6. ՀՐԴԵՀԱՇԵՋ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

77. Խորհանդեսությունների հրդեհաչեջ պահպանության պետք կամ կոլտնտեսությունների կամափոր հրդեհաչեջ պահպանության պետք պարտավոր է՝

ա) բերքը հավաքելու և կտրելու ժամանակ հաղմակերպել վերահիշյալ հակահրդեհային միջոցները:

բ) հակահրդեհային ամբողջ ինվենտարը, հրդեհաչիջման գործիքներն ու միջոցները պահել սարքին վիճակում և բոլոր ջրապահեստներում ունենալ ջրի բավականաչափ պաշար:

գ) մշակել հրդեհների դեմ պայքարելու (առաջին հերթին կալելու տեղերում, հացահատիկային պա-

հահանքում, ՄՏԿ-ներում, անասնաբակերում և այլն) պլան. բնակչությանը ծանոթացնել այդ պլանին, վորի համար կոլտնտեսությունների վարչությունների և ՄՏԿ-ների ու խորհանդեսությունների գլխավորների հայեցողությամբ նշանակել հատուկ ժամանակ:

դ) ծանոթանալ քրեական կրակմարիչների և տրակտորիստների, կոմբայներների, բրեգատիւրների ու դաշտային դաղդահների պահապանների հրդեհաչեջ այլ ինվենտարի հետ վարվելու ձևին:

ե) կալելու դրված դեղերի, դյուղատնտեսական մեքենաների ու գործիքների տեղերում կաղմակերպել կամավոր հրդեհաչեջ բջիջի անդամների որ ու գիշերային հերթապահություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ. — կամավոր հրդեհաչեջ բերք չիջ չիջնելու դեպքում հրդեհաչեջ պահպանության համար պահակներ պետք է դուրս բերել հատուկ մարդկանցից՝ այն ցուցակի կարգով, վոր հաստատել է կոլտնտեսության վարչությունը:

զ) կալերի մոտ հակահրդեհային միջոցներ ձեռք առնելու համար սուսնձնացնել հատուկ պատասխանատու մարդիկ: Վերահիշյալ մարդկանց պետք է հրահանգներ տա հրդեհաչեջ պահպանության պետք: Բերքը հավաքելու և կտրելու ժամանակ մեքենաների բոլոր աշխատողների ուշադրությունը պետք է բեռնել հակահրդեհային միջոցառումները խոստրեն պահպանելու վրա, վորպեսզի կարելի լինի բերքը և մեքենաները դատակարգալին թշնամուց, վնասարարներից ու դատարկաշրջիկներից պաշտպանել:



ը) Աշխատանքների վայրերում սահմանել հրդեհի տաղանապի ազդանշաններ և բոլոր աշխատողներին ծանոթացնել այդ ազդանշաններին:

թ) Աշխատանքի ժամանակ հսկել հակահրդեհային փանոնների ճիշտ կատարմանը:

ժ) հրդեհաչեղ պահպանության կանոնները չկատարելու մասին հայտնել խորհրդատեսության, ՄՏԿ-ի գերեկատորին կամ կոլտնտեսության վաչուկյան նախագահին՝ մեղավորներին պատասխանատվության կանչելու, միաժամանակ հայտնելով այդ մասին ներքոգործող կոմատի շրջանային բաժանմունքին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ.— Խորհրդատեսության, ՄՏԿ-ի կամ կոլտնտեսության մեջ հրդեհաչեղ պահպանության պետ չլինելու դեպքում վերահիշյալ բոլոր առաջները վերաբերում են խորհրդատեսության, ՄՏԿ-ի գերեկատորին (տեղակալին), կոլտնտեսության նախագահին կամ այն հատուկ առանձնացած մարդուն, վորը բերքը հալաքելու և կալոելու ժամանակ հրդեհաչեղ պահպանության կազմակերպելուն պատասխանատու յն:

## 7. ՀՐԴԵՀԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ

78. Հրդեհն ավելի կազմակերպված և արագ կերպով հանդգնելու համար կազմվում են կոլտնտեսության և խորհրդատեսության աշխատողների անվանացուցակներ, վորոնց մեջ մատնանշվում և, թե հրդեհի ժամանակ ով, ինչ կարող և անել (նաոոս բանեցնել, ջուր կրել, բահով աշխատել և այլն):

79. Կալսելու ժամանակ առաջացած հրդեհի դեպ-

քում բրիգադի վրա դրվում են հետևյալ պարտականությունները:

Բրիգադիրը—մինչև կամավոր հրդեհաչեղ բլիշի պետի տեղ հասնելը ղեկավարում և հրդեհաչեղման գործը:

Կշռարարը—կալսիչ մեքենայի վրա կամ նրա մոտիկում յեղած ծղոտը վառվելիս այդ հրդեհը հանդցնում և կրակմարիչով կամ գուլլով ջուր լցնելով:

Թմբուկի վրա աշխատողը—ոգնում և, վոր կալսիչ մեքենան պատվանդանի շրջանակից հանվի, իսկ տրակտորիստը չարժափոկը տեն և չարտում և կալսիչ մեքենան տանում և մի անվտանգ տեղ տրակտորը վառվելիս տրակտորիստն անջատում և մոտորը և սկսված հրդեհը կրակմարիչով, ավաղով կամ հողով հանդցնում և: Կշռարարն ու Թմբուկի մոտի աշխատողը տրակտորիստին ոգնում են, վոր հրդեհը հանդցվի:

Հացահատիկների դեղերը և ծղոտը վառվելիս բրիգադիրի կողմից նշանակված 4 բանվոր հրդեհաչեղ նաոոսը մոտեցնում են հրդեհի տեղը և ջուր են տալիս:

Խուրձ տվողն ու խուրձ քանդողը հրդեհը հանդցնելու համար աշխատում են հրդեհաչեղ փողակով:

Հացահատիկ, հարդ ու ծղոտ կրողները բոլոր դեպքերում ձիերին լծում են հրդեհաչեղ տակաաներին և հրդեհի վայրը ջուր են կրում:

Ծղոտ, հարդ և մեղ տվող—դասավորողներն աշխատում են կեռերով, յեղաններով և փոցիներով կամ այլ միջոցներով վառվող հացահատիկն ու ծղո-



տը Հիմալայոյից անջատել, հեռացնել և ոգնում են ջուր քաշելուն:

80. Ծղոտի կամ հացահատիկների խրձերի վառ-ված տեղերի վրա պետք է ջուր լցնել, և յերբ բոցը հանգցելում է, պետք է ծղոտը կամ խրձերը քանդել, վրան ջուր լցնել և բոցը վերջնականապես հանգցնել: Հրդեհը բախտույն և արագ կերպով լիվիդացեալ յենթարկելու համար անհրաժեշտ է հրդեհաչեջ նա-ստան անընդհատ ջուր մատակարարել, մի բան, վոր հարկ յեղած քանակութեամբ տակառներ և ձիեր չու-նենալու պատճառով շատ անգամ հնարավոր չի լի-նում: Այդպիսի դեպքերում, յեթե հրդեհի տեղին մոտիկ ջուր կա, անհրաժեշտ է մարդկանց անընդհատ շղթա կազմելով հրդեհի տեղը ջուր մատակարարել դուլներով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹ.—Ջուր մատակարարելու այս-պիսի ձև պետք է կիրառել հրդեհի բոլոր դեպ-քերում և այնպիսի բնակելի վայրերում, վորտեղ չի կարող ջուրը տրվել ուղղակի ջրաղբյուրից:

81. Զհնձված հացահատիկների հրդեհի դեպ-քում պետք է վորոշել կրակի շարժման ուղղութիւն-նը, վազել առաջ, ցանքը 4—5 մետր լայնութեամբ և կրակի ամբողջ գծի յերկարութեամբ հնձել (վառել). յեթե կրակն ընթանում է ցածից, անհրաժեշտ է պատրաստել խրավանդներ (каша) կամ գետինը նույն լայնութեամբ հատուկ կերպով վարել, միա-ժամանակ հանգցնելու միջոցներ ձեռք առնել՝ վառ-վող դեղերի վրա հող, ավազ լցնելով, ջուր սրսկե-լով և այլն:

82. Հրդեհ առաջանալու դեպքում կամավոր հրդեհաչեջ լըիջի պետք պետք է իսկույն միջոցներ ձեռք առնի հարեան հրդեհաչեջ կազմակերպութիւններին ոգնութեան կանչելու:

83. Կամավոր հրդեհաչեջ լըիջի պետք պարտավոր է, անկախ հրդեհի պատճառած վնասից և նրա չափե-րից, բոլոր հրդեհների մասին հայտնել Ներքերծ-ժողկոմատի շրջանային բաժամունքին, մատնանշելով հրդեհի պատճառները:

ԽՍՀՄ Ներքերծժողկոմատի Հրդեհաշեջ Պահպա-նութեան Գլխավոր վարչութեան պրոֆիլակտիկայի բաժնի պետի ոգնական՝  
ՌԵԿՍԻՏ





ՀՀ Ազգային գրադարան



NL0291225



ԳԻՆԵԸ 20 ԿՈՊ.

92

13. 937